ԱԴՐԲԵՋԱՆԸ՝ ԱՄՆ-Ի ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ

Ամերիկյան ընթերցողներին այսօրիսին է ներկայացվում Ադրբեջանը՝ «Վաշինգթոն Թայմս» օրաթերթում օգոստոսի 8-ին տպագրված հոդվածով, որի խորագիրն է՝ «Նավթի մի գեթ հոսում է այդ տարածով»: Կասկած չկա, որ այն գրվել է Բաքվում, տպագրվել՝ Վաշինգթոնում:

Տպագրում ենք հատվածներ այդ հոդվածից:

Իրենց անկախությունը վերականգնելուց հետո Անդրկովկասյան հանրապետությունները այլեւս մերձավոր Արեւելքը Եվրոպայից եւ Ասիայի որոշ մասերից բաժանող լեռնային շրջան չեն, այլ եվրասիական միջանցքի դերն ստանձնող մի տարածք: Այդ շրջանի առաջին երկիրը Ադրբեջանը, կարող է դառնալ 21-րդ դարի մի երկրորդ Սաուդյան Արաբիա: Ուստի ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերը, տարածաշրջանային ուժերը եւ Ռուսաստանը բախվում են ազգամիջյան հակամարտություններով, թույլ տնտեսություններով, անկայուն հադադարներով ժամանակավորապես դադարած պատերազմներով մի տարածքում, որտեղ երաշխավորում են, որ ոչ մեկը չի կարող կայունացնել այդ շրջանը: Այդտեղ ազդեցություն եւ իշխանություն ձեռք բերելու հայտ ներկայացնող օտարերկրյա գլխավոր երկիրը, անշուշտ, Ռուսաստանն է, որը շրջանը դիտում է որպես իր մերձակա արտասահմանի մաս: Մերձավոր Արեւելքի եւ Ռուսաստանի միջեւ Անդրկովկասի դիրքը, նրա տնտեսական հարստությունները, հատկապես Ադրբեջանի նավթը եւ հայերի ու ռուսների միջեւ զգացմունքային ու քաղաքական խոր կապերը ներգրավում են ռուս ազգայնականների շահերը: Անշուշտ, Ռուսաստանի շահերից է բխում Ադրբեջանին եւ Հայաստանին գժտության մեջ պահելը: Դա Ռուսաստանին հնարավորություն է ընձեռնում հմտորեն վարվել Ադրբեջանի հետ, մինչ Հայաստանը դիտվում է որպես չափազանց անհրաժեշտ դաշնակից այդ շրջանում:

Նավթատար խողովակաշարը իր տարածով տանելով, Ռուսաստանը տոնեց պյուռոսյան, այսինքն ծանր գնով ձեռք բերված հաղթանակը: Այն կսկսի գործել հոկտեմբերից: Տարածաշրջանում գործող ուժերի Ռուսաստանի, Թուրքիայի եւ ԱՄՆ-ի միջեւ ստեղծվել է ներքին լարված պայքար, որը պետք է լուծվի մինչեւ 1997-ի վերջը: «Վաշինգթոն թայմս» թերթը գրում է, որ ԱՄՆ-ը շահագրգռված չէ Ռուսաստանի շահերը դուրս մղել այդ շրջանից, սակայն, անշուշտ, ԱՄՆ-ի շահերից չի բխում այդ շրջանում Ռուսաստանի դիրքերի կայունացումն ու ծավալումը:

Այն, ինչ մենք երբեմն նշում ենք կասկածանքով, ամերիկյան այդ ազդեցիկ թերթը ազդարարում է արդեն բացահայտ: Այն է եթե ժողովրդավարության եւ մարդու իրավունքների տարրերը մենք լրում ենք հանուն Ադրբեջանում նավթի արտադրության, ապա ակնհայտ է դառնում Ադրբեջանի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականությունը փոխելու հրատապությունը: Փաստերը հետեւյալն են: Ադրբեջանն այդ շրջանում տնտեսական առումներով պատժված միակ երկիրն է, չնայած այն միակ երկիրն է նաեւ, որ ռուսական զորքերին թույլ չի տալիս տեղաշարժվելու իր հողում:

ԱՄՆ-ը արդեն իսկ բազմաթիվ կարեւոր կապեր ունի Ադրբեջանի հետ, ամերիկյան չորս նավթահանող ընկերություններ խոշոր շահաբաժիններ են ստացել չորս նավթադաշտերի ածուրդի ժամանակ եւ հարյուրավոր միլիոնների ներդրումներ են կատարում արդյունահանումը այս տարի սկսելու համար: Բացի այդ, թերթը նշում է ճանապարհների շինարարության, արեւմտյան ոճի հյուրանոցների կառուցման, հեռահաղորդակցության նոր միջոցների ստեղծման անհրաժեշտությունը: Աշխատատեղերի ածի եւ դրամի ներհոսի շնորհիվ Ադրբեջանը կստեղծի իր սոցիալական տնտեսությունը, ինչը իր հերթին ամերիկյան ապրանքների պահանջարկ կստեղծի: Եթե հնարավոր առեւտրական պայմանագրերը շահելու գործում ԱՄՆ-ը չգիջի ճապոնիային, Կորեային ու Չինաստանին, Ապա Ադրբեջանը կարող է առեւտրան դրախտավայր դառնալ ամերիկյան ընկերությունների համար: Այդպիսի «Դրախտավայր» ստեղծելու համար «Վաշինգթոն Թայմս» թերթը առաջարկում է.

1. Աջակցել Ադրբեջանի նավթի կամ արդյունաբերության որեւէ այլ բնագավառում ներդրումների ցանկություն ունեցող ընկերություններին: Սակայն նման աջակցությունն ու առանձին բանկերի կողմից տրամադրվող օգնությունը չեն կարող ամբողջովին փոխարինել Ադրբեջանի դեմ սենատի կողմից որդեգրված 907 հավելվածը Կոնգրեսի կամ նախագահի կողմից չեղյալ հայտարարելու անհրաժեշտությանը:

2. Ավելի սերտացնել երկկողմ կապերը Ադրբեջանի հետ: Ադրբեջանի վարչապետի եւ նախագահի վերջին այցելությունները Վաշինգթոն բարի նշաններ են առ այն, որ Քլինթոնի վարչակազմը գիտակցում էր երկկողմ հարաբերությունների կարեւորությունը:

3. Ավելի գործուն եւ հետեւողականորեն նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը: Թերթի կարծիքով դա «օգուտ կբերի հաճախ այս կամ այն շահերին զոհ գնացած հայ ազգին»:

Ահա այսպես. թերթն առաջարկում է հայ ազգին օգնելու համար Ղարաբաղի հարցը լուծել Քլինթոնի եւ Ալիեւի ձեռնեղմումներով ու գրկախառնություններով համաձայնեցված տարբերակով, դրան «ագրեսիվ կերպով նպաստելով»:

«Ժամանակն է, որպեսզի Կոնգրեսը նույնպես համապատասխան քայլեր ձեռնարկի»...ամերիկյան դաշնականությունը վերանայելու ուղղությամբ», գրում է «Վաշինգթոն Թայմս» թերթը:

Ղ.Գ.

Ադրբեջանի այս վարդագույն ապագան ներկայացնող «Վաշինգթոն Թայմս» օրաթերթի հոդվածը թվում է գրվել է Հ. Ալիեւի փայլատակող ժպիտների ազդեցության տակ, այն պահին, երբ նա տեր եւ տիկին Քլինթոնների ու նրանց դստեր դիմանկարներով գորգեր էր նվիրում ԱՄՆ-ի նախագահին: Արյունոտ պատերազմում ձեռք բերած հաղթանակը այսօր մենք զիջում ենք շողոմ ու ստորաբար ժպիտներով համեմված դիվանագիտական պայմարում: Բազմամիլիոն դոլարների պայմանագրեր, կասպիականի սեւ խավիարով ճոխացրած հանդիսավոր ճաշկերույթներ, նախկին ու ներկայիս բարձրաստիճան եւ ազդեցիկ պաշտոնյաների կաշառում եւ... ժպիտներ, ժպիտներ: Ու նաեւ բուռն հարոզչություն: Դիվանագիտական, գործարար շրջանների ու լրատվության միջոցների հիմնարկներում միլիոնավոր դոլարների կաշառքի հետ մատուցվում են տեսաժապավեններ, ձայնագրություններ, նամակներ, լուսանկարներ Խոջալուից, Աղդամից, նույնիսկ Բաքվից ու գաղթականների ապաստանած վայրերից: Եվ այս բոլորը կազմակերպվում են ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպանատնից՝ դեսպան Հաջիզադեի գլխավորությամբ:

Եվ ալիեւյան այդ բուռն օրերին, երբ ԱՄՆ-ում ոտի էին կանգնել Հայ Դատը, Հայկական համագումարը, գրեթե ողջ սփյուռքահայությունը, հակահարոզչությունը գլխավորելու փորձառեն, այդ թոհուբոհից իր գլուխը պրծացրել եւ երեւանում մամուլի ասուլիսներ էր տալիս ԱՄՆ-ում ՀՀ դեսպանը: Նա հարոզչություն էր ծավալել ներքին լսարանի համար, արտաքին լսարանը հանձնելով ադրբեջանցիների տնօրինությանը:

Մավր ԴԱՆԻԵԼՅԱՆ